ւորս ազգօքս մեր որ հանգուցեալ են առ  
դրունս սրբոյ կաթողիկէիս 'ի Բրիտանոս  
Յիսուս ։

Հայ Բարսեղ ասորի Մշակի արեւելեան գաւառին 'ի  
յորմն հայ գրեալ այս գերեզմանագիր:

Քրիստոս ողորմի Ապէի իւրում գա-  
լըստեանն: Թուական ոճ:

Ի Երբան գաւառի 'ի գեղն' որ այժմ ասի Յար-  
բէ՛րեան 'ի նմա զԷկեղեցի յոյժ հրաշափերտ-  
Թեանք հաստուղեալ, որ եւ շարձանագիրն ունէր  
արքայաճոսար 'ի հիւսիսոսկողման որմն այս քան:

Երբհիւ և ողորմութեանք մարգարի-  
րին Մատուցոյ եւ Օսրբարէ Մանգա-  
տոր Թախուցէս Միկր սպասալար Հայոց  
և Սրաց, որդի մեծի Սարգսի զանձագին  
արարի զհռչակաւոր սուրբ ուխտս Հառի-  
ճայի իւր քնական հայրենատիրացն յաղագս  
կենդանութեան տեառն իմոյ բարեպաշտ  
Թաւմար Թաղուհոյ, և վրիտ Թեան ինձ  
և հարազատ եղբոր իմոյ Իւանէի՛ և զաւ-  
կաց մերոց Եահնաչի և Մաղին, և ծնու-  
ղաց մերոց: Երկնցի 'ի սմա ամբոց և զկա-  
թուղիկէս բազում ծախիւք՝ և զարդարեցի  
ամենայն սպասիւք և սրբութեամբ, և զիմ  
գեղն' որ իւր մերձ 'ի սուրբ ուխտս զՍոկո-  
րին, ընձայեցի սուրբ Մատուածամնիս բա-

լոր ամ հաղահատով սարմն և ջրմն, զոր բը-  
նական լեալ էր. և ետու ջաղաց մի դետիկ' որ  
դիաղաց կոչի, ջաղաց մի Մշիկ գլխ ձորին, և  
պարտեղ մի ծաղկուց ձորին, այդի մէ Մա-  
րեան, և այդի մէ Թալին: Եւ զառաջին  
սահմանքն' որ բուն լեալ էր հաստատեցի,  
'ի սահմանախաչէ 'ի Հառիճոյ դէտն' կոս-  
մարդով գրեթովն՝ ցամաք ձորովն՝ ճինարին  
հասովն՝ զամցից ձորովն՝ արեան աղբիւրովն՝  
հին Հառիճայով. և եզի սահման զայս՝ որ  
յուագ խորանն պատարագել զՔրիստոս  
յիմ անուն հանապազ: Արք' որք հաս-  
տատուն պահեն զյիշատակս մեր օրհնին  
Մատուցոյ և յամենայն սրբոց. իսկ որ հա-  
կառակեն և հանել ջանան վոքր ինչ կամ  
մեծ՝ զանէճս Այանի և զՅուդայի ժա-  
ռանգեցեցեն և կրկին նղովեցին Մատու-  
ցոյ. Թէ որ բունութեամբ և ուժով տանի՛  
յժք հայրապետացն և ամենայն սրբոց ե-  
ղեցի նղովեալ: Գրեցաւ կտակս հաստատ  
'ի Թուխ ոճ:

յ) Յոն գեղ ասորի Հայրապետին Տերոյ Յո-  
հաննու օգնեցոց որեսս շինս Տե մաերու՛ որոյ  
մաերսն իւրաճոս ասանէր Լե իցեր ինչ. որնեալ  
շարք զնոս գրաս իսոյս մե անէալ 'ի գեղնի:

շրջեցոցեալ շոյն՝ երևեցաւ զիւր արչանագիրս—լեւան  
այս կնշ:

Յանուն Աստուծոյ ես Պարնդ Քը-  
խար մերահքս բերի զմիւս (1), շինեցի ըզ-  
հոգեառնս, կանգնեցի զխաչս վասն եր-  
կար կենդանութեան Ամբ սպասալարին  
Շահնշահի, և յիշատակ որդւոյ իմոյ Կա-  
նանչին: Որք երկրպագէք, յիշեցէք ՚ի Վրէս-  
տոս: Թառական՝ ո՛հէ:

Հաղթարուս ոտքէ՛ Աշտնի եօթն խորանս—կասա-  
ցեալ զանգահարան արչանագիրն է՝ որ հայ յա-  
րեւելոց հոռե՛ նոյնոց ոտքէ՛ Աշտն եկեղեցւոյն:

՚Ի Թուին սիդ շինեցաւ գեղեցիկ-  
զարդ տաճարս Աստուծոյ՝ զարթոյցանող  
փառաբանչաց Տեառն եօթն խորանաւ ՚ի  
աէր Համազասպայ, որում ողորմեցի Վը-  
րիտոս՝ և տացի ՚ի լուսեղէն յարկաց իւ-  
րոց ոգւոյ նորա, և Յօհաննիսի բուեր որդ-  
ւոյ իւրոյ և սյլ աշխատողացն, զի բազում  
ջանիւ շինեաց զսա ՚ի յետին ժամանակս  
Թաթարաց:

(1) մել՝ այսինքն Կնիօ Ղաթր աղբեր բերեալ ՚ի լեւանէ:

՚Ի Հաղթարուս հասարակաց գերեզմանն՝ յարեմառն  
հոռե՛ կանգնեալ հայր խաչ Խարեայ Բարչք՝ ՚ի վերայ  
երկոց ասիւնանոց, որ սնեք արչանագիր այս—  
օրինակ:

Հնորհուն Աստուծոյ ես Յակոբ և  
Մարգարէս յառաջնորդութեան տեառն  
Համազասպայ կանգնեցաք զսուրբ Սար-  
գիսս բարեխօս մեզ և Մխիթար վարդա-  
պետին Վօթայրեցոյ՝ և հօր Քարսղի՝ և նրն-  
ջեցեաց մերոց: Որք երկրպագէք Վրիտոս-  
ընկալ սուրբ Աշտնիս, զմեզ յաղթօս յի-  
շեցէք ՚ի Տէր: յիշողք օրհնէք ՚ի Տեառ-  
նէ: ՚Ի Թուիս չի:

Հաղթարուս ոտքէ՛ Աշտնի հրեմառնոյն հոգման Հա-  
մառնոց հոգեալ հոյակապ մեծ եկեղեցւոց արչանա-  
գիրն է, որ գրանն ՚ի վերին սեամ արեմառնոց դը-  
րանն:

՚Ի Թուին Հայոց չի ՚ի տերու-  
թեան մեծին Շահնշահի Օսթրախային  
շինեցաւ մեծախառ տունս Աստուծոյ ՚ի  
աէր Համազասպայ, որում ողորմեցի Վը-  
րիտոս բարի հոգւոյ նորա:

Ի հիսուսային որուն սուրբ՝ Աշտնին հանգնեալ եր  
խառ չարեայ՝ փորտաճ խառչելո-թեան գտարկերե  
փրկելն : որոյ 'ի Արիւնցն հոսոց Գրեալ եր այս  
արձանագիր :

Թուին չիք : յիշատակութեան և տե-  
րութեան սուրբ ուխտախ Աթապակ մեր  
սպասալար պարոն Սաղունին, ես տեր  
Յովհանէս կանգնեցի զկապս ամենափրկիչ՝  
օգնական պարոն Սաղունին և յիշատակ  
հոգւոյ իմոյ :

Պաճաճ իշխանի գերեզմանագիրն՝ որ հայ 'ի վեր  
քան զգերեզման իւր գրեալ ընդ որմն սուրբ Աշ-  
տնի հիսուսայեան գաւթին որեղ յարեւել :

Ի Թուին չիթ յիշատակութեան  
տեղոյս Սաղունին Աս Պաճաճ որդի Վի-  
պարաի և ամուսին իմ՝ Գուգայ յազգէ  
Սամկունեց միաբանեցաք սուրբ Աշտնիս  
Հաղբատայ, և զսուրբ Գրեղոր լուսաւոր-  
չին՝ որ վկայիք ստոյգ նորա Ճկոյթն առ  
մեզ էր նախնեօք, զայն 'ի ինդրոյ եպիս-  
կոսոսիս և միաբանաց ընծայեցաք 'ի սուրբ  
կաթուղիկէս՝ և այլ արդիւնս : Տէր Յով-  
հանէս և միաբանքս սահմանեցին տօն սուրբ

Գրեղորի ծովանոյ շարաթ օրն՝ և զա-  
բաթն և զիւրակէն զամէն եկեղեցիս պա-  
տարագն մեզ առնեն : և ետուն մեզ առն  
և այդի զինչ էլ միաբանի : Աստարիչքն օրհ-  
նին Աստուծոյ :

Յիշեալ Սարճարաշէն եկեղեցոյն՝ որ 'ի Երախ գա-  
ւառին 'ի հարստային որմն հայր եւ այս արձանա-  
գիր ստանց Եռասկանի :

Ենորհիւն Աստուծոյ եւ Սարխամ  
Աբխաղաց և Հայոց Թաղուհի գուտար մե-  
ծին Սենեքերիմայ՝ Թուն Գակիայ Հայոց  
արքայի, որ ետու զսուրս 'ի սուրբ և 'ի  
տիեղերական ուխտս Սարճարաշէն, առաջ  
նարդութեամբ հօր Սաթմենէսի վասն Գակ  
կայ իմ պապոյն մեղաց Թողութեան և Աա-  
տային իմ հանկանն : Աւ հատուցումն բա-  
րի ընկալայ 'ի սրբոց՝ զսեանն եկեղեցին  
զսուրբ Պետրոսի Քրիստոս պատարագաւ  
զտարին ողջոյն Աստային իմ հանկանն՝ մին-  
չ և 'ի դալուստն Քրիստոսի : Արդ եթէ  
որ 'ի մեծամեծաց և 'ի փոքունց 'ի Հա-  
յոց կամ 'ի Վրաց որ այս գրոյս հակառակս  
և զիմ գեօղն զՏարուս 'ի յայս ուխտէս  
հանէ՝ ինքն ելցէ 'ի կենացն Աստուծոյ և

պարտական լիցի արեանն Քրիստոսի, և մի՛  
տեսցէ զվսուս Մատուծոյ: Իսկ որ հասաա-  
տուն պահեն զաւանդս մեր՝ օրհնեալ եղևցին:

Հաղթարտ սորբէ՛ Նշանի հի-սխաշողման փոքր  
եկեղեցոյ արջանագիրն և ասանց Լո-սանի:

Կամաւն Մատուծոյ շինեցաւ սուրբ ե-  
կեղեցիս արդեամբք Խաթունին, որ էր  
դուստր Հասանայ յազգէ Վեստմանց՝ որ  
բերաւ ՚ի Խաչենոյ յամուսնութիւն Օւ-  
քարիս, որ էր տէր Վազայ և Տաւշոյ՝  
Վարդմանայ և տէրունականին և այլոց գա-  
ւստաց, ընդ որում եկեալ եղբարք իւր Սե-  
նքերիմ և Սեադա՝ և ժողովեալ ՚ի Քը-  
քիստոս եղան առ դրան կաթուղիկէիս: Իսկ  
Խաթունն վասն յիշատակի նոցա և իւր  
շինեաց զսա, և ետ ՚ի սա զսուրբ Նշանն  
սակի, որ ունի մասունս, և զաւետարանն  
մեծածախ՝ և սկիբ արծաթիք, և այդի մի  
՚ի Խաթունաշինի: Աւ ետ տէր Յովհաննէս  
և միաբանքս Հաղբատայ տուաք սոցա քա-  
ռասունք մի պատարագ ՚ի տարոջն, սլ լսա-  
վանէ դատէ զնա Մատուծ, և կատարչքդ  
օրհնեսցէ Քրիստոս Մատուծ, ամէն:

Ի գլուխս անոնց Քասող գեղանց՝ որ ՚ի գա-սա-սին  
Մարտին, յեկեղեցոյ յաջ սեանն գրեալ հայր այս  
արջանագիր ասանց Լո-սանի:

Քրիստոս Մատուծ յիշեա՛ զՎազար  
Վանթանեայ տէր:

Հաղթարտ սորբէ՛ Նշանի դնգահասան ասաջն  
էին գերեղման գրով և անգիրք, զգրեալն փո-  
խարկեցաւ ՚ի արտեղոյ որս են այսոցիկ ասանց  
Լո-սանի:

Բրձանս այս սեմական է Սովեստո-  
սի սարկաւազին:

Իս շորս քայլ հետի ՚ի նճանէ ցո-սին գերեղ-  
ման թի կարճ և անշուք, զորն ասէին Լէ Յը-  
հան Պլաւղ Վարդաղեպիկն է՝ և այն անգիրք:

Մի քայլ հետի ՚ի Պլաւղն Յահաննուս էր պատան  
թի, յորում հայր այս արջանագիր ասանց Լո-սանի:

Հօր մերոյ հողերի Վաւթայ վար-  
դապետի Քորայրեցոյ և տապանս՝ յի-  
շեա՛ ՚ի Տէր սուրբս:

Հող Բաղան սուրբ Մշտնի 'ի յիշեալ արևմտեան  
 Բժականաց գաւթին էին գերեղմանս էպիսոպոս  
 սոյ՝ վարդապետոյ՝ Բագաւորոյ՝ Բագաւորաց և  
 էշխանոց հասասար յարաւին, Բայն անասնս  
 գրեալ էին 'ի վերայ աստուծոյն այս յեռմ' որպէս  
 գրին 'ի ներքայ ասանց Բոսանիսի:

Տէր Գրիգորիս. Տէր Գրիգորիս  
 եղբայրն, Փիլիպպոս եպիսկոպոս Առնշիցի  
 Օսթարէի և Իւանէի քա եր որդի Յօհաննէս  
 եպիսկոպոսինն է այս: (Մտի վայր Շիանայն  
 է): Մարիամ դուստր Կիւրիկէի, Թաւաթ  
 Թագուհի. Ռուսուդան. Բաւրինայ, Կիւ  
 րիկէ Թագաւոր, Աբաս Թագաւոր: Օսթա  
 րէի և Իւանէի քոյր՝ Անգակն: Գրիգոր ա  
 միրայ: Աբաս Թագաւոր: Կիւրիկէ Թագաւոր:  
 Կաթմէլ: Թայիկի. Փուրթուխան: Ալ  
 սակ: Սքաւ որդի Ռքանայ: Հանկէ: Գա  
 լիթ: Բուրդ ամիրայ: Խոստարովիկ: Սըմ  
 բատ: Սեադայ: Սենաքէրիմ: Խամեռաւ  
 Հասան: Այս է հանգիստ Մաթու  
 նին. Աանայ: Սանա յ: Նուսթի Ռու  
 սուդան: Ինն և այլ ևս գերեզմանք ան  
 դերք՝ գրանդծք և ծածկեալք 'ի նորոգ շին  
 ուածոց՝ զորս չեղև հնար փոխարկել 'ի  
 քարակէզ. Այլ այլքանս ըստ բերելոյ ա

մանակին փոխարկեցաք 'ի քարակէզ 'ի զբօ  
 սանս հնասէր խնամանց, որք Թէ շահիցին՝  
 անտես մի արացեան յիշեւ առ Տէր զաշ  
 խատօզս սորին զտէր Խաչատուր և զՅօհան  
 քահանայս Լշմիաճնեցիս:

Բ.

Լըրէ: Յովհաննէս Ա. Բահանայի Ունբըշեռ:  
 Յազազս տարազուծեան Ազալաշապատեցւոյ 'ի  
 Տիկիս:

Յորժամ ևհաս Թուականն Հայոցս մի հազար,  
 և ևերկերեւ յետնն շերք հաւասար.  
 մայն ամոց 'ի տանն և եօթն օրն չար,  
 բաժանեցաք 'ի հայրենեացս ըզճահար,  
 և տարազիւ եղաք յճ մի օտար:

Օր դաճուծեան, օր սղալոյ, օր լալոյ  
 ահա ևհաս մեզ ըստ զբոյն կանխելոյ.  
 զի ղեկեցաք 'ի Քրիստոսեանն Աթուայ  
 Աբուստեան ձեացելոյն 'ի լուսոյ,  
 և 'ի նորին սուրբ մալուծեանն զթոյ:

Հարստաբօր լինէր Շահն Բաբական  
 և և բը որդոյ ձեւամբն յիւր յերևան.  
 վասն այն և մերս էշխոյ փոյնն Մահմատ Խան  
 զմեզ վարէր արմատախել Շերախուան,  
 առ անցս Արփոյ գետոյն ստնել իծկան:  
 Առ ճանապարհն ընեային Ապարան,

մերձ յաւերակն Զարընծկար հոգական,  
անդ ստան անձրև, այլ և հարկուտ յորդհոսան,  
արար զմեզ մինչև յողիս ապաստան .  
որք և սառեալք, մտապ մանկուիք մեր մեռան :

Ներ 'ի յերրոր օր Համբարձման մեր փրկչն  
մինչ յորդուրդն Մարմարաչն նստիկն .  
բաժք մահահոտք յերևանայ մեզ հասին,  
Թէ ահա գայ առ ձեզ գերող զօր Զանդին,  
վան այն 'ի հող մեք ձեպկցաք Փամբակին :

Իք փախտեան օրն պատեալ մուժն ամպով ,  
օր և հոսիք անձրևըն ցուրտ շնելով .  
զորն կարուց Ղարախախան՝ գոչելով՝  
զհեռ մտեալ զմեզ հապահք խրոխտալով ,  
երկվարաւ և հրացանաւ վարելով :

Բամ բանակին Իջմիածնի խուճապէր ,  
եւ անարին 'ի միջ բեռանցն Թաքէր .  
խուժանն ամին հապճեող սոխք փայժ փակէր ,  
մարք և մանկուիք և պատառուիք ճէր ,  
զի հետխոս այլ ևս թայլել ոչ զօրէր :

Իք փորքիկ խումբ փորքիկ հօտի մեր Մանկանն,  
որք քաջութեամբ ելին ընդդէմ ճակատին .  
զգնտախ հըյ առ Թշնամին իջուցին ,  
եւ չար դադան զգլուխ նոցն շեջուցին ,  
նակ զուարս առեալս նոցա զարձուցին :

Յուօք մտաք ապա 'ի ձոր Փամբակին ,  
շը Աղաղան Ղարայ անուն հրչիկն .  
անձրևք, հարկուտք հեղի գապիս հոսիկն ,  
հրեղին փայլմունք և սրտմունք լինիկն .  
եւ անցք դժուարք, ւանդեղատուք գիպէին :

Եւեալք անտի չուեաք յերկերն Լուսայ ,

մինչև հասաք 'ի Լեռան Վարդարլոյ ,  
անդ դայք մեզ ձայն Թիդանթիկն դուալոյ  
'ի Ռուսայ առ զօրս Պարսեյ ձգելոյ  
'ի մեծ մարտն յԻջմիածնի եղելոյ :

Զահանման վառեայ զօրս Ռուսայ  
Ցեղեանովն ընդ խաչախուճք հղօրայ .  
'ի դաշա այգեացն Իջմիածնի արշաւեայ  
հուլ 'ի վանն սուրբ կուսանայն Հաւիտիմանց,  
յորոյ 'ի տնան և զՊարսիկն վանեայ :

Մեւ իջևան փակեաք 'ի դեօն Օձուն  
վան ահե թուրք և Ղաղան Բուսչալոյն .  
բանակ հարեալ մերձ 'ի յամրոցս նորուն ,  
եւ հսկեաք ախ և զգեշերնն արթուն  
'ի պահպանել զմեր ընտանիսն երերուն :

Իբրև մնացաք անդ մինչ ցառուք հնձոց ,  
զեղան զմեօք զօրն ապաստմբ Պարսիայնոյ .  
որք աւարի աւին զհօտն անասնոց  
բեռնակեայ և կթանայն մերոց .  
վան այն եղաք որպէս զմի Լքելոյ :

Աղա իլաք 'ի ձորն Չալմիկաղին ,  
շը ճանապարհ տանէր զմեզ Սանահին .  
Մանահեցեք 'ի մինջ երեսս դարձուցին ,  
հրացանօք, քարամբք զմեզ վարեցին .  
եւ ոչ ետուն տեղն յերևանց ամրոցին :

Ծիւրեալ, ճիկեալ ընդ դեռափովն գնացաք ,  
առ սարտորն Հաղբատու մերձեցաք ,  
ընդ կերճս նեղս քարաժայռից ճնշեցաք ,  
մինչ առ կտուր քարանձաւին մեք ելաք ,  
եւ իբր Թէ յերկի յերկինս բարձրացաք :

Նուաղիւր հայ մեր, նակ կերկրք անասնոց

աստականայր ահն և անորին Պարսկայնացի  
զէ Աւերբաւնդը 'ի Հերակիկայ մին որդւոց  
աւեալ զզորս Եւրոպայէն յԱրաղցոց,  
ճիւղեր որսալ զմեզ 'ի ցանցրս նոցունց:

Իբրեցս վասն այս գերս արտասուօք գրեցաք  
աւ Սոլեմնիկի գաւրեւնասորն յղեցաք,  
այլ 'ի նորին օղեւթենէն մերժեցաք,  
վասն այն անտի իջեալ 'ի Ենոզ գնացաք,  
և և յետագարձ 'ի Սասան անդ բնակեցաք:

Յեցեանոյն ընդ Յովհաննէս մեր Պետեն  
յԱրարտեան պատկազմէն յետ եկին.  
զմեզ բերեալ 'ի Բաւ չալու Թուեցին.  
զանուանս արուաց և իգաց մեր գրեցին,  
և և Յովհաննէս Առաջնորդին յանձնեցին:

Իսկ նա զժամ և հայրախնամ սեր եցոյց,  
զմեզ զտարս և զպանդախարս հանդոյց.  
ամեալ Տիկին 'ի Հաւարարն բնակեցոյց.  
և և նորաշէն եկեղեցեալ շինեցոյց,  
որում Աստուած կղկղե մշա վարձատոյց:

Ողբ վասն Ժանդաւանի կղերայ 'ի Տիկին. և  
անուանել զնորս նորս ասորաբեր Ժողովարարն.  
Արեւմտաւ:

Յաւաննեց բարեաց ուղերն յորդաստ՝ յոր  
գասաստ՝  
մաստկարարն երկին և բերի զԹառատ՝ զԹառատ  
յաղագս անթիւ մեղաց մերոց վշառատ՝ վշառատ  
յարեալ խրատել զվերբ հոտս եւր սպերատ, ա  
պերատ:

Օ՛չ Թէ որբան խորդութեամբ ինամբ, իբ  
և և որդէս մայր կամ'նամատոյց մեզ լինէր,  
և և մինչ ցեթն ամ տարադրութեանն պահպանէր,  
մեալով պողոց բարեաց գործոց մեր սպասէր,  
ազատէր:

Հուր նախանձու մեր յթութեան զօրանայր, զ  
ամբարհաւած և բարձրայօնն բաղմանայր, բաղմա  
նայր.  
գառիւ ծերոց և երեցանց կորսնայր, կորսնայր.  
զն յղեացեալն յեմարութեամբ յօրանայր, յօրա  
նայր:

Արեւն արդար ապա ինթիւ մեզ հայեր, մեզ  
հայեր,  
հուր բարեւութեանն ըստ բնախօսին բորբոքէր, բորբո  
զմանկուան մեր և զմանկամարդս խաբշտէր, խաբշ  
մինչ 'ի ներքին շերմ մահուն մուծանէր, մուծաւ:

Մախ զՊետ մեր զՅովհաննէս ծայրագոյնն,  
ծայրագոյնն  
բարե մահուամբ բաւանց 'ի մինջ կանխադոյն,  
կանխադոյն.  
ապա զԺողովն Արարտեան Աղարաջն, Աղար  
Ժանտամհալ տանջէր կարե խտտագոյն:

Իբրև զաղես, զեւարդս և զերես խաբշտեաց,  
խաբշտեաց.  
կակճալն մահուներն անմեղ մանկրտեաց, մանկրտեաց,  
չջորսախրս երեսասարդ ուժեղաց, ուժեղաց

եւ բողոքարդ մանկափարկի հարսնուհեաց, հարսնս  
 Բամբ քաղաքին Տիկեաց և իւր նահանգաց,  
 նահանգաց,  
 փախեալ թաքեան 'ի շուքս այգեաց ւանտառաց,  
 ւանտառաց:

Իսկ ժողովուրդն Արարտեան աղքատաց, աղքատս  
 'ի կարանաննս սով և ժանտախան սպառեաց, սպս  
 էր թիւն հազար և երկերկուր և վաթսունս և:  
 'ի մայիսէ սկսեալ ցաւուրս եւ յետոն եւ յես.  
 ոչ ինայեաց յաղքտան և ոչ փախկատունն, փախս  
 այլ տապաստեաց ընդ ծերան և զկաթնատունն,  
 կաթնատունն:

Յաւահարեալ տիւ և դիշեր հառաչեմ, հառ,  
 վանն բեհման ժողովրդեանս ողբս առնեմ, ողբս  
 առնեմ.  
 նաև զՊէտրոս հարազատս իմ մինչ յեշեմ, մինչ  
 յեշեմ.  
 ընկզբ իմ ծուխ մ'Թնամամ վեր շնչեմ, վեր  
 շնչեմ:

Երբ խրատորէն աս Տանչուսն որքոյ Անեղեցոյ:

Յարեթածնունդ, նորաբոյս սերունդ  
 շահ Եկեղեցւոյ վառեալ ոսկեգունդ:  
 Օրոց ոսկեղոծ, զաւանաւոխ ծածկոց  
 կազմեալ յիմաստոց ձօնմ քեզ օԹոց:  
 Հաւատով, յուսով և մաքուր սերով  
 Երբեակ Միակնն երկրպագ հօգւով:  
 Արեօք իմաստոց, այլև ճնողաց քոց  
 խոնարհեա նոցա զքօ պարանոց:

Նորոյս Սեփն Քրիստոսեան յարկե  
 կաց դու հանապաղ բուժ յաստիճանի:  
 Երանե առնուս, թէ լսեա հեբոյս,  
 եւ լայնեա զեկտաղ երբ զՈւլկեանոս:  
 Բախարար բանիւ բուժեա լեղելով,  
 զար հարեր աղդու նոյն կահուղ լեզուով:  
 Աբամբս ծաղկանց համշերակ մանկանց  
 զքեզ երեոցես վարդ գեղեղազանց:  
 Յնցտե փառաց փախեր դու 'ի բաց,  
 փափաղեաց վերնոյն Սրբոց ստակաց:

Գ.

Համուծոյ Տանօրուրէն Արարտեան տէրապետի  
 որքոք լերինն Ստեպոս:

Սքանչեւազորմն Աստուած զսուրբ  
 լեանն Սասիս ոչ է եդեալ ըստ կլիմայից  
 'ի բարձրութեան երկրի՝ այլ 'ի խանարհ  
 վայրի: զև ըստ համեմատութեան աչաց  
 ոլորք Արադածու լերին հաւասարին գրէ  
 խոյն Ստեպոս. նաև 'ի կողմանէ Պայա-  
 զևտ քաղաքի ցած երևի այս լեան: Այլ  
 թէ որ վիճեացէ, թէ երեալ են մարդիկ 'ի  
 կատար լերինս, կամ թէ հնար է ելանել  
 'ի կողմանէ Պայաղիտու, խարի նա յասողաց  
 կամ յիւր իսկ կարծեաց: Օխ յորէն՝ յոր-  
 մէ ասէ Պէտրոս, ՚ի Ասաց Աստուած՝ յայսմ

հետէ զամենայն առ ուրս երկրի սերմն և հունձք, ցուրտ և տօթ, ամառն և զարուն ևայլն: Ծանն. ի. 22. անտի այսր ձիւնն տեղացեալ կայ 'ի վերայ լեւինս, և ո՛ր շնչաւորի հնար է ելանել 'ի վերայ ամբաթանձրութեան սառնամանեացն: Եւ Յօհանն քահանայ Մարտիրոսեան Եջմիածնեցի 'ի 26 ամի կենացս՝ այն է 'ի 20 օգոստոսի թիվի թաւին Հայոց (1787) վասն ոխտից նպատաւ թեանց աղօթատեղեաց սրբոյ հայրապետին Յակոբայ Մճբնացւոյն յառուրուրաթու ընդ երեկս իջաք յայգիս զեղջին Արիուուոյ, որք 'ի ստորոտս լերին են, և դայր մեզ ձայն 'ի վերուստ 'ի լեռնէն իբրև ահեղ որոտման կամ մեծամեծ թնդանօթից, և հարցեալ ցշննականս զեղջին՝ թէ զի՞նչ իցեն այսօրիկ ահագին դրդմունք և գոչումն լերինն, և նորա տեղեակս արարին զմեզ, թէ ձիւնն փլանի, և անտի արձագանգք ձորոցն թնդան: Իսկ մեք ընդ առաւօտն հայեցեալ իբր առ փոր լերինն՝ տեսաք, զի յարևտից կուսէ առապար մի փլուզեալ էր զձիւնն զիզացեալ 'ի վերայ իւր, և թանձրութիւն փլուածոյն երեկւր իբր 8 կամ 10 բուկչս մարդաբայլ շանապարհի: Եւ արդ՝ եթէ թանձրութիւն ձեան

փորոյ լերինս այսքան, ո՞րքան ապա սրտինն և գլխոյն: Կրկնեմ զբան իմ, թէ շնչաւոր որ չ'է ելեալ ցարդ 'ի գլուխ լերինս, և կործեմ թէ աստի մինչև ցիատարած աշխարհի ոչ որ կարացէ ելանել, զև դադաթն սորա միացեալ է ընդ ամպս երկնից. և ինքնս խոկ լեռանս է ամպածին, զև 'ի դոզոյ խորաիլտ խոխունց ձորոց և ծործորաց նորա ելեալ գորշընաց և չև հասեալ 'ի գլուխն՝ փոխին 'ի ձիւն կամ յանձրև, և դարձեալ իջանեն 'ի վերայ: Թա՛ղ զայս՝ մեծամեծ արհաւիրք են ելանել 'ի կատար նորա, զև 'ի մէջ միոյ ժամու երկիցս և երկոյս գորդեալ գուայ լեռան կամ յամպոց շայթմանց և կամ 'ի փլուզմանէ ձեանցն թանձրակարկաւ, որք 'ի փլանիլն յառաջ միեկն զմանրախոշի հատսն սառնացնցաւ թօզոյ (որ ասի զամպ) ժամու միոյ շանապարհի: Չիւն և սառն անստաշելի լերինս սկսանին հալիլ 'ի մայիսէ ցվերջն սեպտեմբերի, և դորձեն ընդ վարսիւք լերինն զբաղում մեծամեծ և զմանր առուս, յորոց տմանց ջուբքն երեկն յընթացս, և ոմանց նղմունս ընդ երկրաւ դորձեալ ընթանան յաներևոյթս իբր ընդ խողովակս, որոց դրդմունք մնայն լին, և կոխելն և անցա-

նելն 'ի վերայ ոչ է անվանեղ : Արևու թի  
 ջուրքն արբուցանեն զայգիս և զանդաստանո  
 շինականաց գեղջն Արիուուռոյ, և սուղեալ  
 աներևոյ թքն բլեինն ընդ սախք լերինս յա-  
 բևմախց կուսէ յաղբիւրս քահք ասացեալ  
 քարակուտից, և միացեալք ընդ նստին գոր-  
 ծեն զհարուստ գետ մի, որ սախ Մասեաց  
 Աւ ջուր: Մեծամօր միւս Աւ ջուրն այլ  
 է, որ յԱրագածոտնէն բլիս և խառնի  
 Արբառն:

Աւր գիցուք և զպատմութիւն սրբոյն  
 Գաիւթայ հայրապետին Մծբնացոյ, ահա  
 'ի Գայումաւորս Հայոց 'ի 15 դեկտեմբե-  
 րի, որ պատմի թէ Հրեշտակ Տեառն  
 տրպէս ասաց ցորբքն Գաիւթ վասն յու-  
 լով աշխատանաց նորս ելանել 'ի բարձունս  
 լերին և տեսանել զտապանն Նայի, և 'ի  
 չլինելն ձեռնհաս և հնարաւոյ, ու Ար-  
 զտախտակգ և գարձիւր, զի Տէր այսպէս  
 կամեցաւ: Արեմն անկար է 'ի հնարից  
 մարդկան ամբասնալ ցբուն զագաթն նորս  
 և կամ ակնհասես լինել որ 'ի նմա կամ  
 ընդ նովա: Անհատանելի նախասահմանո-  
 թիւնն Ատուծոյ անօրինեալ էր զայն լեառն  
 տեղե կրկրորդ ծնողն մարդկութեանս Նայի  
 և ծնողոց նորս, և չէ հնար ծնելոյն տե-

սանել զարդանա իւրոյ ծնողին. զի և նախ  
 նի ծնեալն 'ի դրախտէն Արամն ոչ կա-  
 րաց միւսանգամ տեսանել զԱդեմ, ուս-  
 տի ելեալն էր: Աւարդն այս պատմու-  
 թիւն սրբազան լերինն Մասեաց և այլոց  
 սուրբ լերանց որք կան, յիս Հայաստան  
 եայց, որք 'ի նախնի սուրբ Հայոց գրին,  
 ոչ պարտին ճարտարութեամբ մոտաց դա-  
 րուցս Խնասանոց քննել և ասել, ակարելի  
 գոյ կամ անկարոյ, այլ հաւատով պարտէ  
 զմենայնն տալ նախասահմանին Ատուծոյ,  
 որ տնօրինեալ է զիւրաքանչիւրնս սու պի-  
 տոյս կանխագետ կամաց իւրն ժամանակաց  
 բաւ վկայելոյ Խնասանոյն, ու Օրն ուր է  
 մարդ, որ գիտիցէ զտորհուրդս Ատուծոյ,  
 կամ ուր ամիցէ զմտաւ, թէ զի՞նչ կա-  
 միցի Տէր, զի խորհուրդք մահականացուաց  
 զանգիտողք են, և զարկաղժուք հնարա-  
 գիտութիւնք մեր, զի մարմին եղծանելէ  
 ծանրացուցանէ, Խնաս. թ. 13:

Պատկախա կարծիք են և այն՝ զոր ա-  
 սին ունիք. թէ 'ի հնութեանն ձիւնն Մա-  
 սեաց լերին սրգնի: Անհիմն է այդ անար-  
 կայ, զի թէպէտ յերաւել զքուոց ի՞նչ զըրբ-  
 թանց ձնահալ տեղեացն կախին մասնաշաղկ  
 որդնատեսակ պղպձակք ջրուրբք թաղանթա-

պատք 'ի յանձնանօթ նիւթոյ իբր հինուա-  
ծոյ ստորդիոտայնի կամ փառի ձուոյ, և  
կամ ներքին թիթղան սոխոյ, որք սակա-  
տա սակաւ ընանին ջուրքք, և անկեալ յեր-  
կիր պայթուցեալ լուծանին, իսկ թէ ձե-  
ռամբ հաացի 'ի շրթանց ձեանն և կալցի  
'ի ձեռին, 'ի չորս կամ 'ի հինգ բույէս տե-  
ւեն և 'ի ջուր լուծանին: Այն նոքա կեն-  
դանիք և ոչ արեամբ շնչառու շարժուիք,  
այլ որդնակերպ թաղանթք իբր ջրալից փու-  
չիկս մանր ձկանց:

Արիւռի գիւղն՝ որ ընդ ստորտով  
լերինս կայ՝ ունի զեկեղեցի մի հասարակ  
ժողովրդեան: Աւ իբրև 'ի բարձս լերինս  
կայ մատուռն մի շինեալ 'ի կամիտասոյ  
հայրապետէն Հայոց, և կոչի վանք կամ  
մենաստան սրբոյն Յակովբայ, և գտանին  
անդ կրօնաւոր արեղայ մի և երկու կամ  
երեք միարանք ընդ իշխանութեամբ եպիս-  
կոպոսին Խորվիրապու վանից, որ երեք ժա-  
մու ճանապարհաւ 'ի հիւսիսոյ կուսէ հեռի  
է 'ի լեռնէս: Աւ իբր 'ի փոր լերինս գը-  
տանի և միւս մատուռն մի մօտ յաղբիւրն՝  
զոր սուրբն Յակովբ բղետցուցեալ է արօ-  
թիւք: Ուր ուխտաւորք մեծաւ աշխատու-  
թեամբ հազիւ կարեն ելանել ոտիւք, որք

և անդ զենուն մատաղս յանասնոց և ջրով  
աղբերն երեալ բաժանեն շինականաց գեղ-  
ջըն, որք սովոր են դալ մինչ անոր: Իսկ  
աղբիւրն է աւազան մի փոքրիկ շինեալ 'ի  
սրբատաշ վիմաց, յոր այլուստ ջուր ինչ ոչ  
մտանէ, և 'ի վերայ նորա շինեալ կայ կա-  
մար բաթ օրինակի լուսանցոյց պատուհա-  
նաց, և բղխի ջուրն անտեւութապէս, և  
որքան կամեցիս առնուլ 'ի վեց կամ յու-  
թըն բույէս, դարձնուլ ընանի և ոչ բնաւ  
պակասի: Աւրեհամ է այնքան, որ զյար-  
բնակեալ ոք՝ կամի դարձեալ բնակել: Աս-  
ողջարար է բազում ախտից մարդոց և ա-  
նասնոց, զոր և 'ի յովով հեռաւոր դառառս  
տանին սակարովք 'ի պէտաբժշկութեան և  
հալածելոյ զմարախո, զՋրեակի, զԹրթուր և  
զայլ փասակար ճճիս արտօրիկց:

Աս հիւսիսի գէմք լերինս է յոյժ  
ցրտային, ուր ոչ գտանի ճառագորունի ինչ.  
միայն յարեգրէմն երևին բանի մի մացառք  
ինչ, որք տան պտուղ կարմիր և մանր՝  
յոյժ թթու, որ ասի կոճոխուր: Արտանի  
և բոյս ինչ փշուտ տերեւովք մշտականաց և  
անուշահոտ՝ տարածեալ ընդ երկրաւ, և  
կոչի 'ի բնակչացն դաղ և այրի 'ի դալարի  
իբրև զմով, և այն է լուցիկ նոցա, և այ-

րելի փոխանակ փայտի : Ղատանի անդ և  
 խոտ ինչ որ վասն կարի կարճութեանն կո-  
 չի թօփալ խոտ, և բայ յասացելոցս այլ  
 բոյս ինչ ոչ գտանի բնաւ 'ի լերինս: Մե-  
 նաստան սրբոյ վանիցն Յակովբայ թէպէտ  
 ունի զպարտէզ, սահայն ոչ գտանի 'ի նը-  
 մախաւարտ ինչ ուտելի, այլ քանի մի տան-  
 ձիք և ընկուղենիք սինք և ոսկնք, որք հա-  
 զլու կամ երբեմն ոչ հասուցանեն զպտուղս  
 'ի վերջս աշնան: Իսկ յանդս Արտաշա-  
 տու Խորվիրապին սրբոյ Լուսաւորչին մերոյ  
 Գրիգորի գտանի սիզաբեր որդն կարմիր,  
 որ ըստ այլազգեաց ասի զըմզ, զոր ոչ գե-  
 տելով այլազգի բնակչաց գաւառին ամել-  
 'ի գործ ըստ ժամանակին, ելանէ նա 'ի  
 սպիտակ բոժոժանման ծննդարանէ իւրմէ,  
 որ յարմատ տեսալ մի սիղոյ իբր 'ի բոյ-  
 նքս սիսուանց շարունակեալ գոյաւորին, և  
 տարածեալք ընդ երեսս դաշտաց՝ լինին կե-  
 րակուր թռչնաց: Աւաղ տղէտ աշխարհին  
 Հայոց, գտանի և 'ի բլուրսն նոյն Արտա-  
 շատու և հող կարմիր, որ ըստ մեզ ասի  
 սիսոր, և ըստ այլազգեաց գիւլերմանի՝ յոյժ  
 լաւն և ընախրն, Ղատանի և հող յոյժ  
 սպիտակ, որ թուրքերէն զարդատուղի ասի՝

Գոյ և քար կրակահան, և քար բոռոյ և  
 կրի լաւն: Բայ յայտոցիկ բլուրքն Ար-  
 տաշատու թեքեալ ունին զգլաւսն գէպ 'ի  
 հարաւ, յորմէ երեւի, թէ ունիցին և հանքս  
 մետաղաց: Բաւականացի այրքանս յողազս  
 լերինն Մասեաց: Այնատես Յօհան քա-  
 հանայ Մարտիրոսեան Լճմիաճնեցի:

Համասօր ծանօթութեան ծովակէն Սեանայ:

Օտլախ այս կամ լեճ 'ի հին պատ-  
 մա թեանց Հայոց կոչի ծով Ղաեղամայ, և  
 ըստ Պարսկց Աբճայ գեօլ վասն փոքրկու-  
 թեանն: Ի վեճակ նահապետին մերոյ Ղաե-  
 ղամայ անկաւ սա, որ եօթներորդ ծնունդ  
 էր 'ի Յաբեթայ, և երրորդ նախնւոյն մե-  
 րոյ Հայկայ, այս է թուանայ նորս:

Ամենայն պատմէք մեր Ղաեղամայ տան  
 զչինտ թիւն Ղաեղարբբունոյ, և ոչ յիշին  
 'ի նոսին բնաւ, թէ 'ի անդի ծովակին յա-  
 ուաջագոյն իցէ եղևալ քաղաք, և զկնի 'ի  
 գետոց հոսանաց ծովացեալ: Այնհիմն է այդ-  
 պիտի կարծիքական առարկութիւն, զի թէ  
 իմաստնախոհն Ղաեղամ՝ որ նախկին հիմ  
 նադիր եղև գաւառին, ոչ տեսանէր զար-  
 գիւնաւորութիւն ծովակին և զհոսանս եր-

կոտասանից և այլոց աւելի մեծամեծ դե-  
տոց և վտակաց և աղբերց ջուրց, որք յեա  
արբուցանելոյ զարգաւանդահոյ երկիրն մը-  
տանեն 'ի չորից կուսէ յայն ծովակ և սը-  
նուցանեն անդէն զերկոտասան ցեղս ձկանց  
և այլ աւելեաց, և 'ի չորեսին եղանակս  
տարւոյն մատուցանեն 'ի վայել մարդկան,  
ապա զխորդ հաճէր և հաւանէր շինել  
անդրէն զբաղար և դնել անուն յարմար  
ըստ անուան իւրոյ Պաեղարբունի:

Պարս թիւն ծովակին երկայն է, յա-  
րեւելից յաջ կուսէ և 'ի հարաւոյ 'ի ձախ  
կոյս իբր թեք անկեալ 'ի մէջ արեւմտից և  
արեւելից: Պատեալ ունի զինքեամբ զչորս  
մեծամեծ լերինս, և ինքն պատէ միայն ըզ-  
սուրբ Մնայատ կղզոյն Աեանայ: Յոշինչ  
կուսէ չունի բնաւին զանդի վայրահակուր  
աւելորդ ջուրք նորս հոսեցին. միայն փոք-  
րիկ գեան Հրազդան (որ ըստ Պարսից կոչի  
Օանկի), սակաւ ջրով ելանէ 'ի նանէ, և  
ոչ 'ի բնէ և իւր կամաւ, այլ 'ի վաղուց  
հետէ 'ի նախնեաց ժամանակաց անտի  
հատեալ և հանեալ է 'ի պէտս քաղաքին  
Արեւանայ և պարսղայ գիւղորէից նորս:  
Արեւելից կուսէ ելեալ 'ի ծովակին խո-  
նարհի ընդ հարաւ և անցանէ ընդ Չորա-

զիւղն Արեւանու: Երջայատ ծովակին չ'է  
չտիեալ ըստ երկրաչափական արուեստի,  
այլ ըստ Միսիական չափու և ըստ փորձոյ  
գեղջուկ բնակչաց լաւ ձիւտոր այնն յա-  
ւուրս չորս հազիւ կարէ շրջանաւնու. ըզ-  
նովաւ անտի, ուստի սկուան ընթանալ:

Չուր ծովակին ընդ ամենայն տեղիս  
իւր ընկելի է և առողջարար, միայն խամ  
ընկողացն տայ նշան, թէ իցէ սակաւ իմն  
ձկնահամ: Օրբեղմնաւոր ճննդարարութե-  
նէ ձկանց սորա՝ զորս ճնանի, (որք մեծաւ  
մատամբ են կարմրախայոք), չ'է հնար պատ-  
մել, զի թէ կարծեսցի ըստ չորժորդ մա-  
սին թուոյ աւաղոյ իւրոյ, չ'է երկրայական  
կարծիք. և պատճառն է, զի դեռ չ'է տե-  
սիալ 'ի նմին աղբ ինչ գաղան ձկան: Բո-  
կգերբք գետոյն և ծովուն չ'են տունիք մոր-  
գաբերք, այլ տունիք ուռեաց և շատքե-  
ղեգանց: Չկուրք ընդ ժամանակս իւրեանց  
ելեալ 'ի ծովակես ընդ զառնիւր գետան  
որք թափին 'ի նա, այնքան խիտ առ խիտ  
թանձրութեամբ 'ի ջուրսն ճապաղին, մին-  
չև ցանցորդաց կոխելով 'ի վերայ նոցա ըն-  
թանալ, և լուսով վառեալ եղեգանց որ-  
սալ հեշտեաւ 'ի գլշերի, որբան և կամին  
ձկնորք: Օր ձուկն սկրահարեալ առ լոյսն՝

կամաւ դիմէ 'ի մահ կարթին : ուր քաջ  
 կարթահար սրսկան 'ի մուտ ժամաւ կարէ  
 կարթել աւելի քան զերկու հազար ձիու-  
 նքս : 'ի կշեռս ոչ գտանին աւելի մեծք  
 քան զմի լեար Պարսից, միջակքն կէս լեար,  
 փորոսքն քան զնոսին մի մի չարէք, և կա-  
 րի մանուէքն կէս չարէք, և այս՝ վասն այ-  
 նորիկ, զի ցեղ ցեղք են : Ոչ գտանի 'ի սո-  
 սին ձուկն առաւել սրարարտ, զի եղիցի  
 վաստարար : չունին զմանր փուշս, միայն  
 զմին աստիարակ և սանարածե, որ 'ի դըւ-  
 խայն իջանէ ցառանս : Տերութիւն Ռուսաց  
 ըստ կիսոյ մասին յերկց ամաց հետէ տիրէ  
 ծախկիս, և կէսն դեռ կայ ընդ իշխանու-  
 թեամբ Պարսից (1), որք 'ի նորոյ լցին ծա-  
 գէ 'ի ծագ Պարսիցք և սղծեցին զսուրբ  
 երկիրն :

Աւերտ մն աշխարհին Գեղամայ սկը-  
 սեալ 'ի թաթարաց և 'ի Սեղեաց վախ-  
 ճան առնու առ Նազիր բանակալաւ թա-  
 գաւորաւն Պարսից, Վալ 'ի յետին ամայա-

(1) Խոսնաւիւննիւն Երեւանայ և Նախիջևանայ  
 դեա 'ի Ֆեաս Պարսից էին յայնժամ, այն է 'ի  
 1819 ամի, յորում գրեցաւ այս :

նալն 'ի Սեղեաց աղետալիս պատմեն դեռ  
 ականատեսք, զոր ունին չաանի 'ի լեւ :  
 Սրբաշէն քարեայ եկեղեցիք դաւաւիս կան  
 դեռ կանգուն : Սուրբ Անապատն Սեան՝  
 որ 'ի հին կոնդակաց կաթուղիկոսաց Հա-  
 յոց և բերանացի աւանդութեամբք ասի  
 հիմնեալ նախ եկեղեցի յանուն սրբոյ Յա-  
 ըութեան 'ի Ռուսարշէն մերմէ, և այլ  
 ևս յանուն սրբոյ Առաքելոցն 'ի Սեւեաց  
 Գշխոյէն : Բաց յայտոյլիկեն զանաղան մատ-  
 ըունք յայտոյ բարեպաշտից առ թագաւո-  
 ըութեամբք Հայոց Բագրատունեաց :

Սուրբ Անապատն Սեան ունի վանա-  
 հայր և կրօնաւորեալ արեղայս վեց, և այլ  
 անապատական աղթարար միանձուսու-  
 թըն, որք ամբիժ հաւատով, անդողուելի  
 յուսով և անշեջանելի սիրով պաշտեն ան-  
 դագար զամենասուրբն Արքայութիւն ըստ  
 աւանդութեան հօր մերոյ սրբոյն Գրիգո-  
 ըի Ռուսարշի :

Օգտագրութենցի ճերունիս և զորտը-  
 դըս Օտփակին Գեղամայ զանձամբ վորձա-  
 ռուսն ներկայացուցեալ, և 'ի նոցանէ խե-  
 լամուտ եղեալ գրեցի Յովհան քահանայ  
 Մարտիրոսեան Իջնիւնեցի, որ այժմն  
 կամ 'ի Հաւլապարն (արուարձան) քաղա-

քին Տփխխայ՝ պանդուխտ :

Առկառնէ ինչ ծանօթուիւնն լանն Արարարէան  
աղանակին Աղղբայ :

Յարեմուտս կոյս հեռի 'ի քաղաքէն  
Երեանայ իբր երկից ժամուց ձիւսորաց ճա-  
նապարհի 'ի գիւղն Հայոց 'ի Աղղբ դատ-  
նի աղն Արարատեան աշխարհի, 'ի լեառն  
մի երկայն անկեալ յարեմտից յարեւել 'ի  
հարաւոյ կողմանէ Աղղբայ գեղջ. յորմէ և  
'ի նոյն լեռնէ գրեթէ աւելորդ քան զբա-  
ւականն հատանի աղն Արարատեան աշխար-  
հի, և մինչև 'ի տանն և հինգ և 'ի քը-  
սանորեայ ճանապարհ տանի 'ի շրջակայ գա-  
ւառս յարեւել, 'ի հիւսիս և 'ի հարաւ .  
զի յարեմտից կուսէն Աղղբայ եռօրեայ ճա-  
նապարհաւ հեռի 'ի Աղղբուան առանի Հա-  
յոց դտանի ընդ երկրաւ աղ հատոր հա-  
տոր, յորում փորելով զհողն պեղեն, և  
սայլովք ցրուեն ընդ արեմուտս և ընդ հիւ-  
սիսոյ գաւառան: Աղղբայք Աղղբայ լեբին  
ուրեք ուրեք յերակս իւր իբրև զհասարակ  
քարախուռն բնական լեբանց և բլրոց երեկն,  
և է զի ծածկեալ է ընդ հողով լեբինն,  
զոր բահով և մրձօք փորելով յառաջ գը-

նան ըստ ականահատից աղախինս ստուարս  
գործելով անդէն իսկ 'ի նիւթոյն, զի մի'  
փլանիցի պըն ստորերկրեայ, և ապա ըստ  
օրինակի սովորական քարահատաց գտեալ  
զնախագոյ դասաւորութիւն միմին, այս է  
զերակուսն աղին, երկաթի սեպով և կը-  
ռանահատութեամբ հատանեն զաղն 'ի մե-  
ծամեծ հատորս, և վերապին բեկեալ զայ-  
նըս երկարութեամբ ըստ չախու գազն (ար-  
շննի) Ուսաց տաշեն և կոփեն ըստ կեր-  
պի քարանց շինութեանց, որպէս զի չորս  
հատոր տաշեալ քարինքն լինիցին բեռնմիոյ  
գրաստու, և կշիռ միոյ բեռին եղիցի վաթ-  
սուն լիտր Արիացոց: Որ 'ի Պարսից գը-  
րամ վաճառի այնքան աղ երեսուն շահի  
(3 ուրբի (I) Ուսաց):

Աղն Աղղբայ պատուական է յոյժ քան  
զամենայն աղս ամենայն աշխարհի ըստ հա-  
մոյն և ըստ սպիտակութեանն: Սպիտա-  
կութիւնն նորա գրեթէ ոչ տարբերի բնաւ  
'ի ձեան սպիտակութենէ. իսկ վասն հա-  
մեղութեանն ակորթէ մարդ կրել 'ի բե-  
լանի զսխեռնաշախ մի առ ամօքելով անու-

(I) Աղղբայք, աստիճանայն:

շէլ զկտորդ իւր, մանաւանդ այն հակաիր-  
եալ անձինք կարի աղատէքք: Եւ թէ խա-  
հարար որ սխալեալ երկրցս յաղէս արկցէ  
'ի կերակուր, լինի այն ուտելի և ո՛չ թա-  
փելի:

Ի գեջն տեղն այսր լերին գտանի  
աղ սառնատեսակ լուսանցող, զոր կոչեն  
աղն աչք: Գառանի 'ի սմին լերին և հանք  
աղն կարմրացայտ նշուք, որպէս յամնս մար-  
մարոնեայ կոիածոյ քարինս երևին՝ որք ը  
Պարսից կոչին զանլուճայ, և մի քան զմի  
են համեղ, լուսափայլ և սպիտակ: Ի  
միջայ այրիցն՝ յորս հատանի աղ, բղխի եր-  
բեմն ջուր աղն անհարել շրթանց և քմաց  
կենդանեաց, որ է՝ զն առուանայ և ելեալ  
յայրից անտի թափի 'ի ստորահոս առու  
գեղջն, և է՝ զն նուազ բղխի և անդրէն  
փոխի 'ի քար աղն: Չիք ամենեւին 'ի լե-  
րինս ջուր քաղցր, այլ ունի զբոյս խոտոյ ը  
հասարակ լերանց: Բնակել ջուր շինակա-  
նացն Կողբայ գեղջ գայ 'ի բացուստ յայ-  
լոց վայրոց և անցանէ բնդ սարոտով ա-  
ղալերինս, յորմէ բնակն Կողբեցիք բնդ ա-  
նասնոց իւրեանց, որով և ուսողանին ան-  
գաստանք, պարտեղք և այգիք նոցա: Ըստ  
աղահանք կամ աղալեառն Ըրարատեանն

Կողբայ ունի երկայնութիւն երկուց ժա-  
մուց ճանապարհի կամ աւելի ևս, զի տա-  
կաւն չէ չափեալ յերկրաչափից: և տե-  
ղին՝ ուստի հատանեն զայն՝ մօտ 'ի գեօղն  
է, և թէ կարծեցի յումեքէ, թէ զկարդ  
յայտքան ժամանակս դնդ 'ի սկզբանէ աչ-  
խարհի հատանի աղն ամ ըստ ամէ առա-  
ւել քան զչափն և գեռ ո՛չ պակասի,  
ծանկցէ այնպիսին: զն յորմէ հետէ սկըս-  
եալ են հատանել 'ի լեռնէս զաղ, գրե-  
թէ 'ի հարիւր մասանց լերինս տակաւին  
մի մասն չէ 'ի գործ արկեալ, և մնացեալն  
ցարդ կայ յիւրում ամբողջ կուտութեան:

Գիւղն Կողբ բաղնանայ 'ի հարիւրոց  
և յայլ աւել թանց Հայաղբի բնակչաց,  
որք և առհասարակ զամն ողջն պարապին  
յայն գործ աղահատութեան: Արձ վասն  
հատանելոյ դբառաքար մի բեռն աղն և տա-  
շելոյ զնոյնս որպէս ասացի 'ի վեր անդ,  
է երեք ուսպլի, յորոց մի ուսպլին է մշա-  
կացն, և երկու ուսպլին դանձարանին Պար-  
սից, զորս ժողովէ անախան նոցա:

Բացում հետախոյղ մանրօքննութեանք  
լուեալ 'ի Կողբացի շինական քարահատէ  
միօջէ և յայլոց անդ երթեկեկոյաց և գը-  
նողաց զաղ, գրեցի Ծօհան նուսատ քա-

Հանայ Մարտիրոսեան Աջմիածնեցի:

Աղբուրմն սաղմուս սա բռնիս պարծպան:

Իջեալ առ սէր անհամեմատ 'ի զգալն ցանկալոյդ պնիւ Յարութիւնի Արարածատրեան Ատարշապատեցւոյդ՝ սաեքիւրեցի ըստ խնդրոյդ զերխ միայն Չառնութեթիւնս վասն Արարատեան սուրբ լերինն Մատեաց, վասն Չառակին Պաղամայ և վասն Արահանքին Արարատեանն Կողբայ, զի այսքան էր հայցումն սիրաղնէիդ: Առ որ աղաչեմ զսէրդ ցանկալի և քե ընդ քեզ զՊայքարոյնն յիարելիս, և երանի՛ թէ լիցեք բանիս սպասաւորի թողուլ զԱտուծոյսն արանց Ատուածայնոց, որք ունեցանն ըզմարդարեականն Ատուծոյ հոգի, և 'ի նախատես տուչութենէ այնր Ատուածհոգւոյ, որքան տանէր բանեղինացն սկար մտք՝ աւանդեցին դարուց աշակերտաց առնուլ, ընդունիլ և պահել. թողուլ զԱտուծոյսն՝ Ատուծոյ ըստ կանխասացութեան սուրբ Պարոյ: Ի Չառուկքն Տեառն Ատուծոյ մերում, և յոյսնիքն մեզ և որդւոց մերոց յաւիտեան, ք. Օրինաց, իթ. 29: Առ որ չպարտիմք բանակալի ինքնիմաստու-

թեամբ դատել զմեմեանս վասն անհաս խորոցն աստուածայնոց, և այլ զընկեր յաղթահարեալ ասել, թէ այս կարելի է և այդ ոչ: Այլ սիրով միաբանեալ ասել, թէ ամենայնն կարելի է առ Ատուծոյ: Օյ այս խի է քրիստոնէիցս հարկ և պարտաւորութիւն՝ մեծաւ երկիր զածութեամբ տարածամ չմերձեալ 'ի ծառն գիտութեան բարւոյ և չարի. և ըստ մերոյն Արարածատրեան չերիլ զպատիժ պատուհասի, այլ բարեպաշտական հաւատով և երկիրդիւ համբարել և ընդունիլ զնահապետաց և ըզմարդարեից զազգմունան հոգեղէնս, որք են պատգամք Ատուածարեալ արանց պատկառելի պահել ըստ տապանակի Տեառն Ատուծոյ, և ոչ ըստ յանդգնութեան քահանային Ողբայ ձեռնամխիլ և անժամանակ պատուհասեալ մեռանիլ: Օյ և արք՝ սրբ 'ի նորումն կտակի գտան պակասեալք յունելոյ զխնարհութեանն Ատուծոյ հոգի, և անձնիմաստ մարդկեղէն հանձարով ձեռն մխեցին հասու լինել խորին խորոցն Ատուծոյ՝ գթեցան առ վիսին գայթակղութեան՝ գլուխալք 'ի պէտպէս հերձուածս կորստեան, որոց ը Պարոյն աղմամուղք իսւարին յաւիտեան գանձեալ պահեալ մնան. ք

Պետ. թ. 17: Յուդ. զ', 13: Ստանորոյ  
 և մեզ ոչ փոքր հարկաւորի զգուշութիւն  
 շմբռձենալոյ աստուածայնոց յաստուածեղէն  
 դատալճնեալ բանն, որ հաստատեալ է  
 և յՂիտանոյն, թէ «Որդեակ՝ զև Աստու-  
 ծոյ պատգամք են, Առակ. լւ. 2: Այլ  
 Աստուածապաշտ կարգաւ կալ մնալ 'ի զըր-  
 եալն, և ակնկալեալք 'ի նոյն՝ սպասել  
 գալտեան Փրկչին մերոյ Յիսուսի Վրէն-  
 ատի օրհնելոյն ընդ Հօր և ընդ Հոգոսն  
 փառակցոց այժմ և միշտ յաւիտեան, և  
 յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Գձեցան բանքս 'ի թուոջ փրկչին 1819  
 Տոյնմբերի 20 ընդ հոլանեաւ սուրբ Գե-  
 որգայ եկեղեցոյն Էջմիածնեցոց՝ որ 'ի  
 Հաւարարն քաղաքին թախիբիղու. աշխա-  
 տանրեալ 'ի սէր անարատ բարեկամին իմոյ  
 Աստուածատուրեանն (չարու թիւնի աղնուին  
 Մաղարչապատեցոյ) 'ի Յովհանն պանդուխտ  
 քահանայէս Ոսկերչեան՝ որ Սարաբա-  
 եանն է:

Օտնութեան:

Յայտուիչ երես ամենահամար ծանօթա-  
 թեան շերին Մասնաց, Օտնութիւն Գեղոսայ և

աղահոսիւն Վոյթայ և է իցեն ինչ բանք ընդ-  
 դէժ փոքրոց, արհեստի և գիտութեան այժմեան  
 լուսաւոր արտոյ, համարելի են հետք վաղեմի ու-  
 խաղաշրեալ կարծեաց արհեստաժ ծածանակին և  
 աշխարհին, յորս եկոյ ընաշխարհիչ Հայրն (Յով-  
 հան Ոսկերչեան հոսրերչ իւրով խառնալից և  
 ճշարտարան շինման, ուստի և ոչ այնքան ար-  
 ծանիչ են լարելէ յեղադրութեան և սոփանաց.  
 զի յ. () ր առար էղելէ զբն, և գեշեր գիշերի  
 ցոյցանէ զգիտութեան, և հմնաբանեալ է Մար-  
 գարէն Ղաւթիլ յաստուածայն հոգեւելոյ Սաղոս-  
 երգութեանն թ. 6 թ. 3: Վո- ընդ էր-  
 նայիչ շնորհն նորս սրտնչայիւր, և զանհաս Շնոր-  
 հարան նորս օրհնեալ գոհութան և երէն-դած  
 արարեւ այժմ և մշտ:

Ա. Արարարեան:

յՅ 41, 'ի տալն II փոխանակ կարգալոյ  
 " 'ի թուին Հայոց " պարտ է կարգալ  
 " 'ի թուականիս Հայոց ":

Faint, illegible text, likely bleed-through from the reverse side of the page.

17. [illegible]

Faint, illegible text at the bottom of the page, possibly bleed-through.

« Ազգային գրադարան



NL0249511

